

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ
ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

**«Հայաստանի Էկոնոմիկայի Չարգացման Բանկ» բազ բաժնետիրական ընկերություն, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
բազ բաժնետիրական ընկերություն**

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 562705, 538904

Ֆաքս՝ (374 10) 538904

E-mail: bank@aeb.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն քիվ 2, 05 օգոստոսի 2008թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)
արժեթղթերի քանակը՝	933335
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	2500 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

Արսեն Կատվայան	Գործադիր փոխտնօրեն		05.08.2008թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հայկ Սկրտչյան	Գործադիր փոխտնօրեն		05.08.2008թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վարդան Բաբայան	Գլխավոր հաշվապահ		05.08.2008թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են (ստորագրությունները հավաստվում են են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

Գավիթ Սուքիասյան	Գործադիր տնօրեն		05.08.2008թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

«05» օգոստոսի 2008թ.

Կ.Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

« 30 » 07 2008 թ.
Երևան

Թիվ 1/7690

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳՐԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը, «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի 84-րդ կանոնը, «ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության» հանձնաժողովի (24.07.2008թ. արձանագրություն թիվ 32) եզրակացությունը և հաշվի առնելով «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի 04.07.2008թ. թիվ 09-02/7 միջնորդագիրը,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Գրանցել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ կանոնադրությունում կատարված փոփոխությունները, հաստատված բանկի բաժնետերերի 07.06.2008թ. ընդհանուր ժողովի կողմից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ



Ա. ԶԱՎԱԴՅԱՆ

ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ
Մտնողի թիվ: 1/271/31.07.08թ.

Հաստատված է

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում

“07” հունիսի 2008թ.

Գրանցված է

ՀՀ Կենտրոնական բանկում

„ 30 „.....07.....2008թ.

Գրանցման համարը-----1-----

Բանկի Խորհրդի Նախագահ

----- Ս. Սուքիասյան

Բանկի գործադիր տնօրեն

----- Դ. Սուքիասյան

Կենտրոնական բանկի նախագահ

----- Ա. Ջավադյան

„ „----- 2008 թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Հայաստանի Էկոնոմիկայի Չարգացման Բանկ
Բաց Բաժնետիրական Ընկերություն**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Բանկի լրիվ ֆիրմային անվանումը՝ հայերեն՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

անգլերեն՝ „ARMENIAN ECONOMY DEVELOPMENT BANK” OPEN JOINT STOCK COMPANY
ռուսերեն՝ „ՆԷՕԾՖՄԷԲՏՆԱ ԲԱՆԿ ՇՅՕՅՕ ԸՆԿՆԱԿՆԵՐՈՒԹՅՈՒՆ ԿՕՅՊՆԻՍԿԱՅԻ ՓԲԸ”

1.2 Բանկի կրճատ անվանումը հայերեն՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
անգլերեն՝ „ARMECONOMBANK” OJSC
ռուսերեն՝ /ԷՄՕՇՅՕՅՕ ՆԷՕԾՖՄԷԲՏ ԵՅՖ

1.3 Բանկի իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան փող. 23/1:

1.4 1987թ. ստեղծված նախկին ԽՍՀՄ Բնակարկային Հայկական Հանրապետական Բանկի հիման վրա ՀՀ Նախարարների խորհրդի 14.02.91թ. թիվ 115 որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության պետական սկզբնորոշող կոմերցիոն բանկը (1991-93թթ. «Հայպետարկային» ՓԲԸ) 1993 թվականի դեկտեմբերի 28-ն վերագրանցվել է որպես «Հայաստանի Էկոնոմիկայի զարգացման բաժնետիրական բանկ»: Հայէկոնոմբանկի բաժնետեղ-րերի 1995թ. մարտի 14-ին կայացած ընդհանուր ժողովի որոշմամբ այն վերակազմավորվել է «Հայաստանի Էկոնոմիկայի զարգացման բանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ):

1.5 Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու պահից:

1.6 Բանկի հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.7 Բանկն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՀ Կենտրոնական Բանկի խորհրդի որոշումներով, այլ նորմատիվ և ներքին իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.8 Բանկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, իր անվանմամբ և խորհրդանիշով կլոր կնիք (հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզվով գրառումներով), անկյունային դրոշմակնիք և համապատասխան կնիքներ բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար:

1.9 Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գրանցումը և լուծարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

1.10 Բանկի մասնաճյուղերը բանկային գործունեություն կամ ֆինանսական գործառնություններ են իրականացնում Բանկի անունից սույն կանոնադրության և Բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում, որոնք ամրագրվում են Բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններում:

1.11 Բանկը կարող է ՀՀ օրենսդրությանը համապատասխան հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ և մասնակցել դրանցում:

1.12 Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով (միջոցներով), եթե օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված:

1.13 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և Բանկը պատասխանատվություն չեն կրում միմյանց պարտավորությունների համար, եթե նրանք այդպիսիք չեն ստանձնել:

1.14 ՀՀ Կենտրոնական բանկը և Բանկը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե նրանք այդպիսիք չեն ստանձնել:

1.15 Բանկը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բանկի բաժնետերերը Բանկի պարտավորությունների համար պատասխանատվություն են կրում կանոնադրական հիմնադրամում իրենց կատարած ներդրման չափով, բայց ոչ պակաս բաժնետոմսերի անվանական արժեքից:

1.16 Բանկը պատասխանատու է իր կառուցվածքային ստորաբաժանումների և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների պարտավորությունների համար:

1.17 Բանկն ինքնուրույն իրականացնում է իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը: Գույքի գնահատումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.18 Աշխատանքի ընդունման, փոխադրման պայմանագրերը, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի լուծումը գրանցվում է գրանցամատյանում, որի վարումը և պահպանումը իրականացվում է գործատուի ներկայացուցչի կողմից, համաձայն գործող օրենսդրության:

2. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

2.1. Բանկը ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

ա/ ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.

բ/ տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ/ տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).

դ/ բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ .

ե/ մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.

զ/ թողարկել, գնել (գեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, մման այլ գործառնություններ կատարել.

է/ ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել.

ը/ մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).

թ/ գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.

ժ/ գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և մման այլ գործարքներ.

ժա/ իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժբ/ ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժգ/ մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

ժդ/ ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի ետ ստացման գործունեություն:

2.2. Բանկը նշված գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

2.3. ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ Բանկը կարող է իրականացնել նաև այնպիսի գործունեություն կամ գործառնություններ, որոնք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության հետ:

2.4. Նշված գործառնությունները Բանկը կատարում է պայմանագրերի հիման վրա, որոնցում սահմանվում են կողմերի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, տոկոսադրույքները, արտոնությունները, տույժերը, պարտավորությունների պահովման ձևերը, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:

2.5. Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում:

2.6. Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝

ա/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4.99 տոկոս և ավելին է,

բ/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15%-ը,

գ/ բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35 %-ը :

Սույն կետով նախատեսվածը կարգավորվում է «Բանկերի և փոխառնության մասին» ՀՀ օրենքով:

2.7. Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում

2.8. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և միջնորդավճարների չափը:

2.9. Բանկն երաշխավորում է իր հաճախորդների և թղթակից բանկերի ավանդների, հաշիվների և գործառնությունների գաղտնիությունը և ամբողջականության պահպանումը:

2.10. Բանկում գտնվող հաճախորդների դրամական միջոցների (ներառյալ քաղաքացիների ավանդները) և այլ գույքի վրա կարող է կալանք դրվել և բռնագանձում տարածվել միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍՆ, ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՍՆԵՐ

3.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը ձևավորվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից և որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող բանկի գույքի նվազագույն չափը:

3.2. Բանկի բաժնետոմսերը և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումը կատարվում է բաց կամ փակ բաժանորդագրության միջոցով:

3.3. Սովորական բաժնետոմսերի տեսակարար կշիռը Բանկի կանոնադրական հիմնադրամում պետք է լինի առնվազն 75%:

3.4. Օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկի բաժնետոմսերը թողարկվում են ազատ շրջանառության իրավունքով և կարող են գնվել, վաճառվել, գրավադրվել, ժառանգության իրավունքով փոխանցվել այլ անձանց ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների կողմից:

3.5. Բաժնետոմսերի արժեքը լրիվ վճարելուց հետո բաժնետերերի բաժնետոմսերը հաշվառվում են Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայում, որոնց վերաբերյալ բաժնետիրոջը կարող է տրվել քաղվածք: Նշված քաղվածքը արժեթուղթ չէ: Բանկի թողարկված բաժնետոմսերը, օրենքին համապատասխան, ապանյութականացված են:

3.6. Բանկի կողմից իր բաժնետոմսերը գեղչելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը, դրանք գրավ ընդունելով վարկ տալը արգելվում է, բացառությամբ «Բանկերի և փոխառնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի վեցերորդ մասին համապատասխան՝ բանկի կողմից իր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ բանկի բաժնետոմսերը գրավ ընդունելը կամ ձեռք բերելը անհրաժեշտ է տվյալ բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար, ընդ որում, բանկը պարտավոր է տվյալ բաժնետոմսերի սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից 2 ամսվա ընթացքում իրացնել դրանք: Ժամկետը կարող է երկարացվել ևս 6 ամսով՝ ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ:

3.7. Բանկի հայտարարված և փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը կազմում է 2,333,337,500 դրամ, որը ներառում է 933,335 սովորական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ 2500 դրամ անվանական արժեքով:

3.8. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամի չափը՝ Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերն իրացվել և վճարվել են ամբողջությամբ:

3.9. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը արգելվում է, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3.10. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական հիմնադրամի 15% գումարի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Բանկի կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի առնվազն 5%-ի չափով, ինչպես նաև Բանկի նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է խորհրդի որոշմամբ Բանկի կորուստները ծածկելու, ինչպես նաև Բանկի պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը ետ գնելու համար, եթե Բանկի շահույթը այդ նպատակին չի բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

3.11. Բանկի բաժնետերերի ժողովի որոշմամբ Բանկի շահույթի հաշվին կարող է ստեղծվել աշխատակիցների բաժնետիրացման հատուկ հիմնադրամ, որը օգտագործվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

3.12. Բանկի խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, որոնք նպատակ ունեն նպաստել Բանկի տնտեսական զարգացման և Բանկի աշխատողների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը: Այդ հիմնադրամների հատկացումների կարգը և չափը որոշում է Բանկի խորհուրդը:

4. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

4.1. Բանկի կանոնադրական հիմնադրամի ձևավորմանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:

4.2. Բանկի բաժնետերերը պարտավոր են.

ա/ չիրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ,

բ/ բաժնետերերը կարող են կրել Բանկի կանոնադրությամբ նախատեսված և օրենքին ու այլ իրավական ակտերին չհակասող այլ պարտավորություններ,

գ/ կատարել Բանկի կառավարման մարմինների որոշումները,

դ/ ձեռնպահ մնալ գործունեության այն բոլոր տեսակներից, որոնք կարող են վնաս պատճառել Բանկին:

4.3. Բանկի յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը իրավունք ունի.

ա/ մասնակցել Բանկի ընդհանուր ժողովին վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

բ/ մասնակցել Բանկի կառավարմանը,

գ/ ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,

դ/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն,

ե/ ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձին,

զ/ հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում,

է/ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

ը/ հայցով դիմել դատարան Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

թ/ Բանկի լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը,

ժ/ձեռք բերել իրեն պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք, եթե՝

1. որոշում է ընդունվել բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերը քվեարկել է բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել.

2. կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել է նշված բաժնետերի իրավունքները, և նա դեմ է քվեարկել կամ չի մասնակցել այդ հարցի քվեարկությանը,

ժա/ ունենալ Բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4.4. Արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերը իրավունք ունեն՝

ա/ մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին առանց ձայնի իրավունքի, բ/ ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված չափով և կարգով

գ/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն,

դ/ ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը Բանկի լուծարման դեպքում:

4.5. Անձը կամ փոխկապակցված անձինք Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են օրենքով սահմանված կարգով նշանակալից (ուղղակի և անուղղակի) և այլ մասնակցություն (ոչ նշանակալից) ձեռք

բերել միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Տվյալ անձը պետք է բավարարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դիմումի մերժման հիմք են հանդիսանում հետևյալ փաստերի առկայությունը.

ա/ անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար դատվածություն ունի.

բ/ անձն օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով գրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

գ/ անձը սնանկ է ճանաչվել և չմարված (չներված) պարտավորություններ ունի.

դ/ անձի գործողությունները նախկինում հանգեցրել են Բանկի կամ այլ անձի սնանկացմանը.

ե/ տվյալ անձը կամ փոխկապակցված անձինք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը ՀՀ Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված` ՀՀ Կենտրոնական բանկի կարծիքով հիմքեր կան կասկածելու, որ տվյալ անձի` որպես բանկի բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի, գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացման կամ ֆինանսական վիճակի վատթարացման, կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկման.

զ/ տվյալ գործարքն ուղղված է կամ հանգեցնում է, կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը.

է/ տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը և նրա հետ փոխկապակցված անձինք ՀՀ բանկային շուկայում տվյալ գործարքի հետևանքով ձեռք են բերում գերիշխող դիրք, որն իրենց հնարավորություն է տալիս կանխորոշել օրենսդրությամբ Բանկին թույլատրված գործառնությունների կամ դրանցից թեկուզ մեկի շուկայական սակագները կամ պայմանները.

ը/ փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած ձևի և կարգի խախտումներով կամ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում արտացոլվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ.

թ/ տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակիցը կամ նրա հետ փոխկապակցված անձը ՀՀ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով գտնվում է ֆինանսական վատ վիճակում կամ նշանակալից մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձանց ֆինանսական վիճակի վատթարացումը կարող է պատճառ հանդիսանալ բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց և (կամ) նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեությունը կամ բանկի հետ նրանց փոխհարաբերությունների բնույթը ՀՀ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով կարող է խոչընդոտել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը կամ թույլ չի տալիս բացահայտելու կամ արդյունավետ կառավարելու բանկի ռիսկերը.

ժ/ անձը չի ներկայացնում իր կողմից ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն).

Այլ մասնակցության ձեռքբերումը, ի թիվս վերոնշյալի, մերժվում է եթե.

ա/ կխախտվեն բանկի հիմնական տնտեսական նորմատիվները.

բ/ ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի հաստատված ուղեցույցով հիմնավորված` ՀՀ Կենտրոնական բանկի կարծիքով հիմքեր կան կասկածելու, որ գործարքի հետևանքով կարող են առաջ գալ բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, հեղինակության կամ գործարար համբավի վարկաբեկման միտումներ:

Սույն կետով սահմանված սահմանափակումները չեն տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող բանկի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման վրա, եթե դա կատարվել է ֆոնդային բորսայում և չի գերազանցում բանկի կանոնադրական հիմնադրամի 20 տոկոսը, իսկ գերազանցելու դեպքում` ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

5. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

5.1. Իր գործունեության արդյունքում Բանկի ստացած շահույթը ենթակա է հարկման՝ օրենսդրության համաձայն: Բանկը կարող է շահութաբաժիններ վճարել միայն տարեկան արդյունքներով:

5.2. Օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր մյուս վճարումները կատարելուց հետո ձևավորվում է Բանկի տրամադրության տակ մնացած շահույթը, որի բաշխումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ շահութաբաժինների վճարման, սույն կանոնադրությամբ սահմանված ֆոնդերի համալրման, բանկի զարգացման նպատակով:

5.3. Բանկի բաժնետերերի տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը, որով սահմանվում է վճարման չափը և ժամկետները: Շահութաբաժինների վճարումը կատարվում է համաձայն բանկի խորհրդի հաստատած կարգի:

5.4. Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն:

6. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

6.1. Բանկի կառավարման մարմիններն են.

6.1.1. Բաժնետերերի ընդհանուր ժողովը, որը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է,

6.1.2. Բանկի խորհուրդը, որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում,

6.1.3. Բանկի գործադիր տնօրենը, որը ի պաշտոնե վարչության նախագահն է,

6.1.4. Բանկի վարչությունը:

6.2. Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է Բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 6 ամսվա ընթացքում:

6.3. Բանկի բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող բաժնետերերի ընդհանուր ժողովները, որոնք հրավիրվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար՝ համարվում են արտահերթ:

6.4. Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Բանկի խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր մարմնի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

6.5. Բաժնետերերն ունեն կանոնադրական հիմնադրամում իրենց բաժնետոմսերի համապատասխան ձայնի իրավունք: Բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

6.6. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը իրավասու է, եթե ժողովին ներկա են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50%-ից ավելին տիրապետող բաժնետերեր:

6.7. Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները՝

ա/ Բանկի Կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և

լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ/ Բանկի վերակազմակերպումը.

գ/ Բանկի լուծարումը.

դ/ Ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե/ Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Բանկի խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Բանկի խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ/ Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է/ Խորհրդի ներկայացմամբ բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ը/ Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի և վնասի բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ/ օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժ/ ընդհանուր ժողովի վարման կարգը ,

ժա/ հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժբ/ օրենքով սահմանված դեպքերում Բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 %-ից ավելին):

6.8. Որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդ որում 6.7 կետի (ա), (բ), (գ), (դ), (զ) և (ժբ) ենթակետերով սահմանված հարցի շուրջ որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցող ձայների իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4 –ով, իսկ (զ) ենթակետով ոչ պակաս, քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից: Ժողովի նախապատրաստումը և վարումը իրականացվում է համաձայն Բանկի ընդհանուր ժողովի հաստատած ժողովի նախապատրաստման և վարման կարգի, օգտագործելով օրենքով սահմանված քվեաթերթիկները: Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցումը հրապարակվում է գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում: Եթե տվյալ ժամանակամիջոցում նշված օրաթերթը լույս չի տեսնում, ապա բաժնետերերի ժողովի գումարման ծանուցումը հրապարակվում է խորհրդի որոշմամբ սահմանվող այլ օրաթերթում:

6.9. Բանկի Խորհրդի կանոնակարգի հաստատումը, դրանում փոփոխությունները և լրացումները կատարվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցող ձայների իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4 –ով:

6.10. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): Սույն կանոնադրության 6.7 կետի (բ), (զ) և (ը) ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումը չի կարող ընդունվել հեռակա կարգով քվեարկությամբ: Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմով: Նման նիստը հեռակա /հարցման/ կարգով անցկացված նիստ չի համարվում:

6.11. Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

6.12. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ:

6.13. Բանկի ընդհանուր ժողովի ավարտից 5-օրվա ընթացքում երկու օրինակով կազմվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրություն, որը պարունակում է ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի ընդունված որոշումները:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն օրենքով վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմնին:

6.14. Բանկի խորհուրդը իրականացնում է բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

6.15. Բանկի խորհրդի անդամներն ընտրվում են բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում 1 տարի ժամկետով՝ բանկի բաժնետերերի կողմից կումուլյատիվ քվեարկության սկզբունքով՝ համաձայն որի բաժնետիրոջ ձայների քանակը բազմապատկվում է ընտրվող (վերընտրվող) անդամների քանակով: Բանկի խորհրդի կազմում կարող են ընտրվել Բանկի բաժնետեր չհանդիսացող անձինք: Բանկի Խորհրդի անդամների թեկնածությունների վերաբերյալ առաջարկություններ կարող է ներկայացնել նաև Խորհուրդը:

6.16. Բանկի խորհուրդը բաղկացած է 7 անդամներից:

6.17. Բանկի խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Բանկի խորհրդի անդամների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ խորհրդի անդամների նոր ընտրությունը իրականացվում է արտահերթ ժողովների գումարմամբ: Ընտրությունը կատարվում է նույն ընթացակարգով, ինչպես և տարեկան ընդհանուր ժողովում խորհրդի անդամների ընտրությունն է, համաձայն Բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատված Ժողովի նախապատրաստման և վարման կարգի:

6.18. Բանկի այն բաժնետերերը, որոնք բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Բանկի խորհրդի կազմում կամ նշանակել իրենց ներկայացուցչին:

6.19. Բանկի այն բաժնետերերը, որոնք բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում: Նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը խորհրդում հնարավոր է միայն բանկի բաժնետերերի խմբի ստեղծման մասին օրենքով սահմանված կարգով համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում, համաձայն ժողովի նախապատրաստման և վարման կարգի: Պայմանագրի պատճենները տրամադրվում են ընդհանուր ժողովի բոլոր բաժնետերերին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացված քվեաթերթիկները բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

6.20. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող՝ բաժնետերերն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու բանկի խորհրդի կազմում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ, և որոնք չեն մասնակցել 6.19. կետում նշված պայմանագրի կնքմանը:

Բանկի խորհրդի կազմում փոքր բաժնետիրոջ ներկայացուցչի առաջադրման համար ժողովին մասնակցող յուրաքանչյուր փոքր բաժնետեր կարող է լրացնել սահմանված ձևի առաջարկ, նշելով իր դիրքորոշումը հարցի վերաբերյալ:

Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի ընտրության համար լրացված առաջարկները, համակարգչային ծրագրի միջոցով ամփոփվում են հաշվիչ հանձնաժողովի կողմից, կազմելով ամփոփ տեղեկանք ստացված առաջարկների վերաբերյալ, որը ներկայացվում է Խորհրդի նախագահին, կցելով լրացված առաջարկները:

Տեղեկանքում նշվում են առաջարկված ներկայացուցիչների անունները և ազգանունները, նրանց առաջարկողների ընդհանուր թիվը և քանակը, ինչպես նաև առաջարկություն չունեցող բաժնետերերի թիվը և քանակը:

Խորհրդի ընտրության հարցի ներկայացման ժամանակ Խորհրդի նախագահը ընթերցում է վերը նշված տեղեկանքը և առավելագույն ձայներ հավաքած ներկայացուցչի վերաբերյալ գործող օրենսդրությամբ պահանջվող տեղեկատվությունը, որը պետք է ներկայացված լինի առաջարկությանը կից, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացված թվաթերթիկները բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

Առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն համարվում է ընդգրկված Բանկի խորհրդի կազմում որպես փոքր բաժնետերերի ներկայացուցիչ առանց մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընտրության: Երկու և ավելի անձի օգտին հավասար թվով առաջարկներ ստացվելու դեպքում, Բանկի խորհրդի կազմում ընդգրկվում է այն անձը, ով առավելագույնս համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած չափանիշերին:

Եթե ընդհանուր ժողովին ներկա փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի կողմից իրենց շահերը ներկայացնող ներկայացուցիչ չի առաջարկվում, խորհուրդը իրավասու է փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի շահերի պաշտպանության լիազորությունը դնել խորհրդի անդամներից մեկի վրա:

6.21. Խորհրդի անդամները վարձատրվում են:

6.22. Բանկի խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

ա/ բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ/ ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարում, օրակարգի հաստատում, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստման աշխատանքների իրականացման ապահովումը.

գ/ բանկի գործադիր մարմնի /վարչության/ անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ/ բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե/ բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ/ բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.

է/ շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են բանկի բաժնետերերի ռեեստրում՝ բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

ը/ բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

թ/ ընդհանուր ժողովի հաստատմանը բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

ժ/ բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժա/ բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժբ/ բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժգ/ բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բախշումը.

ժդ/ բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ժե/ բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժզ/ բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Բանկի կանոնադրական հիմնադրամի չափի ավելացումը.

ժէ/ բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,

ժը/ դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում

ժթ/ Բանկի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

ի/ գույքի շուկայական արժեքի որոշումը օրենքով սահմանված կարգով,

իա/ օրենքով նախատեսված դեպքերում տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետզնումը

իբ/ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքները կնքումը՝ (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 %-ի չափով),

իգ/ բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման և դադարեցման մասին,

իդ/ որոշել Բանկի կողմից բաժնետերերի ժողովի հետ կապված տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի մասին, ներառյալ ծանուցման մամուլի միջոցի ընտրությունը,

իէ/ խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,

իզ/ առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրում և մասնակցություն,

իէ/ իրականացնել օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

6.23. Բանկի խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Բանկի Խորհուրդը տարին առնվազն մեկ անգամ բանկի Խորհրդի նիստում քննարկում է և

անհրաժեշտության դեպքում վերանայում է բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերը և ներքին իրավական այլ ակտերը: Եռամսյակը առնվազն մեկ անգամ, համաձայն իր կողմից հաստատած ձևի, բանկի Խորհուրդը քննարկում է բանկի Գործադիր տնօրենի (Վարչության), Ներքին ատղիտի ստորաբաժանման և Գլխավոր հաշվապահի հաշվետվությունները:

6.24. Բանկի խորհրդի նիստերը հրավիրվում են նրա նախագահի կամ տեղակալի կողմից առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

6.25. Բանկի խորհրդի նիստերը գումարում է Բանկի խորհրդի նախագահը՝ իր, Բանկի խորհրդի անդամի, գործադիր տնօրենի /Վարչության/, ներքին ատղիտի ստորաբաժանման ղեկավարի, բանկի արտաքին ատղիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետերերի/բաժնետերերի/ գրավոր պահանջով: Բանկի խորհրդի նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստում մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Բանկի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է: Խորհրդի նիստերին Խորհրդի անդամ չհանդիսացող անձանց մասնակցությունը կարգավորվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված Խորհրդի կանոնակարգով և որոշումներով:

6.26. Բանկի խորհրդի նիստերը կարող են անցկացվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով): Սույն կանոնադրության 6.22 կետի գ/, դ/, թ/ և ժգ/ ենթակետերում նշված, ինչպես նաև բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, բանկի խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել բանկի խորհրդի հեռակա նիստերի ժամանակ: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ հաղորդակցական սարքերի, կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմով, որոնց շնորհիվ նիստին մասնակցող բոլոր անձինքն ի վիճակի կլինեն լսել միմյանց, և նիստին մասնակցելը կհանդիսանա նիստին ներկայություն անձամբ, այսինքն նման նիստը չի համարվի հեռակա քվեարկությամբ /հարցման/ կարգով անցկացված նիստ և նրա արձանագրությունը կկազմվի 6.27 կետի համաձայն:

6.27. Խորհրդի նիստերը արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները: Բանկի խորհրդի նիստերի վարման և արձանագրությունների կազմման կարգը արտացոլված է բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատված բանկի Խորհրդի կանոնակարգում:

Բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը կանոնադրությամբ վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմնին:

6.28. Բանկի խորհրդի նախագահը.

ա/ ընտրվում է Բանկի խորհրդի անդամների կողմից, խորհրդի անդամների կազմից՝ ձայների մեծամասնությամբ,

բ/ կազմակերպում է Բանկի խորհրդի աշխատանքները, (հրավիրում է խորհրդակցություններ, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ),

գ/ գումարում և նախագահում է Բանկի խորհրդի նիստերը,

դ/ կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրության վարումը,

ե/ նախագահում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովներում,

զ/ կնքում է Բանկի Գործադիր տնօրենի (Վարչության նախագահի) և վարչության անդամների հետ պայմանագրեր,

է/ խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Բանկի խորհրդի նախագահի տեղակալը:

Բանկի խորհրդի գործունեությունը իրականացվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգի համաձայն:

6.29. Բանկի Գործադիր տնօրենը (Վարչության նախագահը), որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

6.30. Բանկի գործադիր տնօրենը /Վարչության նախագահ/.

ա/ տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

բ/ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին,

գ/ Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

դ/ կատարում է Բանկի վարչության նախագահի տեղակալների և վարչության անդամների միջև պարտականությունների բաշխում,

ե/ լուծում է սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր, իր իրավասության շրջանակներում իրականացնում այլ գործառնություններ:

6.31.Բանկի վարչությունը կազմվում է Գործադիր տնօրենից (Վարչության նախագահից), նրա տեղակալներից, գլխավոր հաշվապահից, ինչպես նաև Բանկի այլ պաշտոնատար անձանցից, որոնք նշանակվում են Բանկի խորհրդի կողմից:

6.32.Բանկի վարչությունը.

ա/ խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը.

բ/ ապահովում է ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի որոշումների կատարումը,

գ/ իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը,

դ/ կազմակերպում է ընդհանուր ժողովի, Բանկի խորհրդի և իր կողմից ընդունված որոշումների կատարումը,

ե/ գումարում է իր նիստերը ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ,

զ/ իր իրավասության շրջանակներում սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, դրամարկղային սպասարկման, դրամի ու Բանկի այլ արժեքների պահպանումը, հաշվառումն ու հաշվետվությունը և իրականացնում է դրանց վերահսկողությունը,

է/ սահմանում է ակտիվային ու պասիվային գործառնությունների գծով տոկոսադրույքների քաղաքականությունը,

ը/ վերահսկում է օրենսդրության պահպանումը Բանկում և նրա կառուցվածքային ստորաբաժանումներում,

թ/ նախապես քննարկում է վարչության կողմից Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերը,

ժ/ քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը, Բանկի ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,

ժա/ հաստատում է Բանկի աշխատողների և մյուս ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների իրավունքների ու պարտականությունների մասին հրահանգները,

ժբ/ կատարում է Բանկի պաշտոնատար անձանց նշանակում իր իրավասության շրջանակներում,

քննարկում է Գործադիր տնօրենի (Վարչության նախագահի), վարչության անդամների և Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից վարչության քննարկմանը ներկայացված այլ հարցերը:

Այն հարցերը, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ընդհանուր ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են գործադիր տնօրենի /վարչության/ իրավասությանը:

6.33.Ընկերության Գործադիր տնօրենի (Վարչության նախագահի) և վարչության անդամների իրավունքներն ու պարտականությունները, համակարգվող ոլորտները որոշվում են սույն կանոնադրությամբ, Խորհրդի կողմից հաստատված Վարչության կանոնակարգով, Բանկի կառուցվածքով, այլ իրավական ակտերով և Բանկի խորհրդի նախագահի հետ նրանց կնքված պայմանագրերով: Բանկի Գործադիր տնօրենի (Վարչության նախագահի) տեղակալները ի պաշտոնե փոխարինում են Գործադիր տնօրենին (Վարչության նախագահին): Բանկի Գործադիր տնօրենը և վարչության անդամները կարող են այլ կազմակերպություններում վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Բանկի խորհրդի համաձայնությամբ:

6.34.Վարչության նիստը իրավասու է լուծել ներկայացվող հարցերը, եթե նիստին ներկա են վարչության անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ բաց քվեարկությամբ: Հավասար ձայների դեպքում Գործադիր տնօրենի (Վարչության նախագահի) ձայնը համարվում է որոշիչ: Վարչության նիստի արձանագրությունն ստորագրում են նիստի մասնակցող բոլոր անդամները: Վարչության

նիստերը կազմակերպում և վարում է գործադիր տնօրենը, որն ստորագրում է նիստի որոշումները: Բանկի Վարչության նիստերի գումարումը, արձանագրությունների կազմումը կարգավորվում է Բանկի Խորհրդի հաստատած Բանկի Վարչության կանոնակարգով:

6.35.Բանկի գլխավոր հաշվապահը իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

6.36.Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է բանկի խորհրդի կողմից՝ բանկի գործադիր տնօրենի ներկայացմամբ:

6.37.Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր ժողովին, խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

6.38.Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերի և բանկի կանոնադրությանը համապատասխան:

6.39. Բանկի գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ բանկի խորհրդին և գործադիր տնօրենին /վարչությանն/ է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ խորհրդի հաստատված ձևով և բովանդակությամբ:

6.40.Բանկի խորհրդի անդամների, Գործադիր տնօրենի (Վարչության նախագահի), վարչության անդամների պատասխանատվությունը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ:

6.41.Բանկի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերը հրապարակվում են Բանկի ինտերնետ կայքում օրենքով, ենթաօրենսդրական ակտերով և բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

7. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ

7.1. Բանկի գործունեության արդյունքներն արտացոլվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկին ներկայացվող հաշվետվություններում:

7.2. Բանկերը հաշվապահական հաշվառում վարում են Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

7.3. Բանկը կազմում և հրապարակում է տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված ձևերով:

7.4. Բանկի ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

7.5. Բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի սահմանած կարգով:

8. ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

8.1. Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է արտաքին աուդիտի կողմից: Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը ընտրվում է մրցույթով՝ համաձայն գործող կարգի և հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից:

8.2. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև բանկի քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատերերի պահանջով, որոնք ընտրում են արտաքին աուդիտ իրականացնող անձին, վճարելով նրա ծառայությունների դիմաց: Ընդ որում նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն

ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար: Բանկի արտաքին ատոլիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև բանկի խորհրդի կողմից՝ բանկի միջոցների հաշվին:

8.3. Արտաքին ատոլիտի եզրակացությունը Կենտրոնական բանկին է ներկայացվում մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

9. ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

9.1. Բանկի ներքին ատոլիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները նշանակվում են բանկի խորհրդի կողմից: Ներքին ատոլիտի անդամ չեն կարող լինել բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

9.2. Բանկի ներքին ատոլիտը՝

ա/ բանկում հսկողություն է իրականացնում բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ.

բ/ հսկողություն է իրականացնում բանկի գործադիր տնօրենի /վարչության/, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և բանկի ներքին ակտերի, գործադիր տնօրենին /վարչությանը/ տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.

գ/ եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

9.3. Ներքին ատոլիտի ղեկավարը բանկի խորհրդին և գործադիր տնօրենին /վարչությանը/ ներկայացնում է հաշվետվություններ՝

հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.

արտահերթ, եթե բացահայտվել են ներքին ատոլիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են գործադիր տնօրենի /վարչության/ կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:

9.4. Ներքին ատոլիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումները բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել բանկի խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

9.5 Բանկի ներքին ատոլիտի ստորաբաժանման գործունեությունը կարգավորվում է ներքին ատոլիտի կանոնակարգով և ներքին այլ իրավական ակտերով:

10. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

10.1. Բանկի գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում: Բանկի գործունեությունը դադարում է վերակազմակերպման (միացման, վերակազմավորման) և լուծարման միջոցով:

10.2. Բանկի վերակազմավորումը կատարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

10.3. Բանկի լուծարումը տեղի է ունենում հետևյալ դեպքերում՝

ա) լիցենզիան անվավեր ճանաչելու,

բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու,

գ) «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում,

դ) Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ,

ե) օրենքով նախատեսված այլ հիմքերով:

10.4. Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ բանկի լուծարման նպատակով ընդհանուր ժողովի կողմից լուծարման նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկին դիմելու մասին որոշման հիման վրա բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում լուծարման նախնական համաձայնություն ստանալու հայտ՝ կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը: ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լուծարման նախնական

համաձայնություն ստանալուց հետո բանկը կարող է միջոցներ ձեռնարկել պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ բանկի պարտավորությունների դադարեցման ուղղությամբ, նշված պարտավորությունների դադարեցնելուց հետո միայն ընդհանուր ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել և դիմել ՀՀ Կենտրոնական բանկ լուծարման թույլտվությունը ստանալու մասին՝ դրան կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը: ՀՀ Կենտրոնական բանկը լուծարման թույլտվություն տալու դեպքում ընդունում է նաև բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում: Ընդհանուր ժողովի որոշմամբ լուծարվող բանկերի թղթակցային հաշիվների վարման և փակման կարգը սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը:

10.5. Բանկի լուծարային հանձնաժողովը ստեղծվում է դատարանի կամ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումը կայացնելու պահից՝ առնվազն 5 օրվա ժամկետում Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ Բանկը լուծարելու, նրա գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով: Այն կազմվում է առնվազն 3 անդամներից: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք:

10.6. Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է տվյալ բանկի գործադիր տնօրենը կամ կառավարման նման լիազորություններ իրականացնող անձը: Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում լուծարվող բանկի կառավարման լիազորությունները:

10.7. Լուծարային հանձնաժողով ստեղծելուց հետո երեք օրվա ընթացքում Բանկը հայտարարություն է տալիս մամուլում և ծանուցում է ՀՀ Կենտրոնական բանկին Բանկի լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի և ժամկետների մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից:

Լուծարային հանձնաժողով չստեղծվելու դեպքում բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

10.8. Լուծարային հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով իրականացնում է բանկի լուծարման ընթացակարգը: Բանկի լուծարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով լուծարման գործընթացում գտնվող բանկում ՀՀ Կենտրոնական բանկը կարող է իրականացնել ստուգում:

10.9. Բանկի լուծարման դեպքում նրա բոլոր դրամական միջոցները, ներառյալ բանկի գույքի իրացումից ստացված հասույթը, ուղղվում է Բանկի պարտատերերի պահանջների բավարարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ մնացած մասով բաշխվում է Բանկի բաժնետերերի միջև Բանկի կանոնադրական հիմնադրամում իրենց բաժնեմասերին համամասնորեն:

10.10. Բանկը համարվում է լուծարված, լուծարային հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ ներկայացված լուծարվող բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատված լուծարման հաշվեկշիռը հաստատելուց հետո: Բանկի լուծարման մասին ՀՀ Կենտրոնական բանկում վարվող բանկերի գրանցումների մատյանում գրառում է կատարվում, որից հետո բանկը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարած: ՀՀ Կենտրոնական բանկն այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին: Լուծարային հանձնաժողովը բանկի լուծարման վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով տեղեկանք է հրապարակում: